Արձանագրություն 14

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով երկու փուլով մրցույթ ընթացակարգի երկրորդ փուլի հայտերի գնահատման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.01.2024թ. ժամը 17:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է. Հակոբյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ

Ա. Ավանեսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,
Գ. Մանթաշյան - ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ,
Ս. Հովհաննիսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական,
Ա. Արամյան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ,
Թ. Ղալայան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի պետ,
Ա. Ղազարյան - ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,
Ս. Մինասյան - ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

1. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>**

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են որոշ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի մասով՝

- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում բացակայում է մասնակցի՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետում պայմանագրի ապահովում ներկայացնելու վերաբերյալ հայտարարությունը (պայմանագրի ապահովման փոխարեն նշված է որակավորման ապահովում, որը հրավերով չի պահանջվել),

- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը (նշված հղումը չի հանդիսանում մասնակցի իրական շահառուներ պարունակող կայքէջի հղումը),
- Համաձայն հրավերի 4.5 կետի՝ հայտով ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն հաստատված մասնակցի կողմից, սակայն վերջինիս կողմից ներկայացված շնորհանդեսը ներկայացվել է առանց հաստատման,
- Հրավերի տեխնիկական բնութագրի 8.30 կետով նախատեսված է, որ միջոցառման անխափան անցկացման համար անհրաժեշտ է ապահովել պահեստային գեներատորի առկայություն, ինչն արտացոլված է նաև գնային առաջարկի բացվածքում (2 հատ): Մինչդեռ մասնակցի կողմից ներկայացված հայտին կից տեխնիկայի ցանկում անդրադարձ է կատարված միայն անխափան սնուցման սարքերի (UPS) ապահովմանը:

2. «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ի մասով՝
- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ում՝ դիմում-հայտարարության «չափաբաժնի (չափաբաժինների) համարը» դաշտում լրացված է չափաբաժնի անվանումը չափաբաժնի համարի փոխարեն,
- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում բացակայում է մասնակցի՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետում պայմանագրի ապահովում ներկայացնելու վերաբերյալ հայտարարությունը (պայմանագրի ապահովման փոխարեն նշված է որակավորման ապահովում, որը հրավերով չի պահանջվել),
- Մասնակցի կողմից աշխատանքային ռեսուրսներով ներկայացված մասնագետ Աշոտ Առաքելյանի ինքնակենսագրությունից պարզ չէ, թե կոնկրետ ո՞ր որակավորմամբ է առաջադրվել նրա թեկնածությունը,
- Համաձայն հրավերի 4.5 կետի՝ հայտով ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն հաստատված մասնակցի կողմից, սակայն վերջինիս կողմից ներկայացված շնորհանդեսը ներկայացվել է առանց հաստատման:

3. «Մոդդ Իվենց» ՍՊԸ-ի մասով՝
- Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում բացակայում է մասնակցի՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետում պայմանագրի ապահովում ներկայացնելու վերաբերյալ հայտարարությունը (պայմանագրի ապահովման փոխարեն նշված է որակավորման ապահովում, որը հրավերով չի պահանջվել),
- Մասնակցի կողմից աշխատանքային ռեսուրսներով առաջադրված մասնագետների ինքնակենսագրությունները (բացառությամբ Ավետիս Գրիգորյանի և Հովհաննես Մանուկյանի) ներկայացված են անգլերեն լեզվով, այնինչ՝ համաձայն հրավերի 4.6

կետի՝ հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն (հայերենը պարտադիր է): Բացի այդ, ինքնակենսագրություններով չի երևում, թե որ մասնագետի թեկնածությունը որ որակավորմամբ է առաջադրվել,

- Համաձայն հրավերի 4.5 կետի՝ հայտով ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն հաստատված մասնակցի կողմից, սակայն վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական առաջարկը և շնորհանդեսը ներկայացվել են առանց հաստատման,
- Մասնակցի կողմից ներկայացված հայտի բնօրինակում առկա է տեխնիկական վրիպակ. 2-րդ և 3-րդ էջերի փոխարեն կցված են այլ էջեր (խնդիրն առկա չէ պատճենների պարագայում),
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում է տեղեկատվություն՝

ա) միջոցառման անցկացման վայրերի գույքատեխնիկական հագեցվածության ապահովման մասով, և հղում է կատարվում տեխնիկական առաջադրանքին՝ առանց որևէ հստակ նկարագրության: Գույքատեխնիկական հագեցվածության բացվածքը (կահավորում, ձայնային համակարգերի ապահովում, վիդեո համակարգերի ապահովում, տեսանկարահանում և հեռարձակում, համաժամանակյա թարգմանության ապահովում, լուսավորության ապահովում, գրասենյակային պարագաների և ՏՀՏ տեխնիկայի ապահովում, հուշարար համակարգի ապահովում) նկարագրված է գնային առաջարկի բացվածքում, և միայն կահավորման մասով է հնարավոր մոտավոր պատկերացում կազմել հայտին կից ներկայացված շնորհանդեսից:

բ) հյուրասիրության կազմակերպման վերաբերյալ, և շնորհանդեսում ընդհանրական անդրադարձ է կատարվում հյուրասիրությանը՝ առանց որևէ տարբերակման (ետնախաճաշ, ընդմիջումների իրականացման անընդհատ հասանելիություն, բոլոր մասնակիցների ընդունելություն, փակման արարողություն և լանչ-բոքսեր): Նշենք, որ թվարկված բոլոր բաղադրիչներն արտացոլված են գնային առաջարկի բացվածքում:

գ) Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում և հարակից տարածքում համացանցի հասանելիության ապահովման, պահեստային գեներատորի ապահովման, ինչպես նաև կամավորների ներգրավման հարցի վերաբերյալ:

4. «Աութսորս» ՍՊԸ-ի մասով՝

- Մասնակիցը չի ներկայացրել հրավերով պահանջվող հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը,
- Մասնակցի կողմից աշխատանքային ռեսուրսներով առաջադրված մասնագետ Հմայակ Խաչատրյանի ինքնակենսագրությունը ներկայացված է անգլերեն լեզվով, այնինչ՝ համաձայն հրավերի 4.6 կետի՝ հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն (հայերենը պարտադիր է),

- Մասնակցի կողմից աշխատանքային ռեսուրսներով որպես կրեատիվ ղեկավար առաջադրված մասնագետ Արթուր Մանուկյանի ինքնակենսագրությունում որպես վերջին 5 տարիների ընթացքում ունեցած փորձը ներկայացված է բեմադրող ռեժիսորի փորձ՝ ենթադրաբար կրեատիվ ղեկավարի փորձի փոխարեն (եթե դրանք նույնն են՝ պարզաբանման կարիք կա): Եվ եթե այդպես է, ապա միայն առաջադրված մյուս 2 մասնագետների ինքնակենսագրություններով չի երևում, թե որ մասնագետի թեկնածությունը որ որակավորմամբ է առաջադրվել,
- Համաձայն հրավերի 4.5 կետի՝ հայտով ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն հաստատված մասնակցի կողմից, վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական առաջարկը և շնորհանդեսը ներկայացվել են առանց հաստատման,
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում, ինչպես նաև շնորհանդեսում բացակայում է տեղեկատվություն միջոցառման անցկացման վայրերի կահավորման, լուսավորության, պաշտոնական պատվիրակությունների ղեկավարների և ՎՀԵԲ բարձրաստիճան ղեկավարության համար նվերների (այս մասով հղում է կատարվում հավելված 2-ին, այնինչ վերջինս այլ բովանդակության է), Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում և հարակից տարածքում համացանցի հասանելիության ապահովման, ինչպես նաև պահեստային գեներատորի ապահովման վերաբերյալ: Նշենք, որ թվարկված բոլոր բաղադրիչներն արտացոլված են գնային առաջարկի բացվածքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 8, դեմ – 0

2. <u>Հանձնաժողովի կայացրած որոշումները</u>

Հանձնաժողովը որոշեց՝

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ին, «Դոմինո Վիդեո Փրոդաքշն» ՍՊԸ-ին, «Մոդդ Իվենց» ՍՊԸ-ին և «Աութսորս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում (մեկ աշխատանքային օր) շտկել առկա անհամապատասխանությունները՝ ներկայացնելով հրավերի պահանջներին համապատասխան ապրանքի ամբողջական նկարագիրը:
2. Ընթացակարգի երկրորդ փուլին հայտ ներկայացրած մասնակիցներին հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ շնորհանդեսները բանավոր ներկայացնելու համար ս.թ. հունվարի 31-ին 16:00-ից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 8, դեմ – 0

3. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

1. «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հունվարի 31-ին ժամը 16:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 8, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի ղեկավար՝ _____ Է. Հակոբյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Ավանեսյան

_____ Գ. Մանթաշյան

_____ Ս. Հովհաննիսյան

_____ Ա. Արամյան

_____ Թ. Ղալայան

_____ Ա. Ղազարյան

_____ Ս. Մինասյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան